ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա Աշխարհագրություն

Թեմա Ժողովրդագրական հիմնախնդիրներ

Կատարող Ալինա Գրիգորյան Արամայիսի

Աղինի միջնակարգ դպրոց Աշխարհագրություն

Ղեկավար Վոլոդյա Գրիգորյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2

Համամոլորակային հիմնախնդիրներ..... 2

Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը..... 4

Համաշխարհային բնակչության աճի տեմպերի հիմնախնդիրը..... 5

Դեմոգրաֆիական անցման կոնցեպցիան..... 7

«Մալթուսի ազգաբնակչության մասին տեսությունը»..... 9

Ժողովրդագրական հիմնախնդիրները տարբեր տիպի երկրներում և դրանց լուծմանուղիները..... 11

Ժողովրդագրական հիմնախնդիրները ՀՀ-ում..... 16

Եզրակացություն..... 18

Գրականության ցանկ..... 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Համամոլորակային են այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում նրանց ներկային ու ապագային, և դրանց լուծման համար պահանջվում է բոլոր ժողովուրդների ու գործողությունների միասնությունը :

Մարդկության համար առավել հրատապ են հետևյալ համամոլորակային հիմնախնդիրները.

1. Խաղաղության պահպանության հիմնախնդիրը՝ կապված բնական միջավայրի խախտման հետ,

2.Զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը,

3. Թույլ զարգացած երկրներում հարյուր միլիոնավոր մարդկանց մշտական թերսնման և սովի հետ կապված պարենային հիմնախնդիրը,

4.Մոլորակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ ու հումքային հիմնախնդիրը,

5. Նախկին գաղութների հետամնացության հաղթահարման հիմնախնդիրը, որը, ցավոք, ոչ միայն չի վերանում, այլև երկրագնդի որոշ տարածաշրջաններում դրսևորվում է առավել ցայտուն ,

6.Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը՝ առաջին հերթին կապված նրա կենսաբանական արդյունավետության և աղտոտման հետ,

7.Տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը,

8. Կլիմայի փոփոխության հիմնախնդիրը,

9.Բնապահպանական հիմնախնդիրը՝ կապված բնական միջավայրի

խախտման հետ:


Խաղաղության պահպանության հիմնախնդիր
Էներգետիկ և հումքային հիմնախնդիր
Ռեսուրսների հիմնախնդիրը
Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիր
Ճգնաժամային հիմնախնդիր
Առողջության պահպանության հիմնախնդիր
Վթարային իրավիճակներ
Ահաբեկչություն
Բյուրոկրատիա
Ժողովրդավարության դեֆիցիտը
Ուրբանիզացիա
Միջազգային հարաբերություններ
Ժողովրդագրական
Պարենային հիմնախնդիր
Հեռամնացության հիմնախնդիր
Բնապահպանական հիմնախնդիր



ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Համամոլորակայինհիմնախնդիրներիփոխկապակցվածությունը դառնումէպատճառ, որ դրանք գիտնականների, քաղաքագետների,սոցիոլգների ու ոլորտի այլ ներկայացուցիչների շրջանակներից դուրս մտահոգեն նաև ամբողջ հասարակությանը: Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի էությունը երկրագնդի բնակչության աճի այնպիսի կարգավորումն է, որ այն համապատասխանի երկրագնդի տնտեսական ու սոցիալական զարգացման պահանջներին: Բնակչության թվի աճի բարձր տեմպերի պատճառով ավելանում է սովյալների, անտունների ու գործազուրկների թիվը,ավելանում է մարդկանց կուտակումը խոշոր քաղաքներում, մեծանում է ճնշումը բնության վրա, որի հետևանքով վատթարանում է բնական միջավայրի որակը, նվազում են բնական ռեսուրսների պաշարները, շատանում են հիվանդությունները, որոնք էլ վտանգում են բնական միջավայրը ու գցում դրա որակը: Բնակչության թվի աճի տեմպերը համամոլորակային մասշտաբով չեն համապատասխանում երկրագնդի տնտեսական, սոցիալական և բնապահպանական պահանջներին ու հնարավորություններին: Գիտնականներըժողովրդագրական հիմնախնդիրը համարում են կարևորներից մեկը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա լուծումից է կախված համամոլորակային այլ հիմնախնդիրների լուծումը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Մարդկության ամբողջ պատմության ընթացքում աշխարհի բնակչությունն անընդհատ աճում է: Երկար դարեր այն չափազանց դանդաղ է աճել: XX դարում բնակչության աճի տեմպերը կտրուկ արագացան: Աշխարհի բնակչությունն իր առաջին միլիարդին հասել է 1820 թվականին , երկրորդին՝ 107 տարի անց, երրորդին՝32տարի անց, չորրորդին՝15 տարի անց, հինգերորդին՝13 տարի անց, վեցերորդին՝12 տարի անց: Բնակչությունը հատկապես արագ աճում էր XX դարի երկրորդ կեսին:



Համաշխարհային բնակչության աճի միջին տարեկան տեմպերը աստիճանբարդանդաղումեն: Ներկայումսկազմումէ1,1%: Դա պայմանավորված է նրանով , որ Հյուսիսային Ամերիկայի , Եվրոպայի և Ճապոնիայիբնակչությունննանցավպարզվերարտադրության, որին բնորոշ է բնակչության աննշան աճը կամ պակասելը: Միաժամանակ զգալիորեն նվազելէ Չինաստանի և Հարավ-արևելյանԱսիայի երկրների բնական աճը: Սակայնտեմպերի այս նվազումը չի նշանակում համաշխարհային դեմոգրաֆիականիրավիճակիմեղմացում XXI դարիառաջին տասնամյակում, քանի

որ տեմպերի այս նվազումը դեռևս անբավարար է բացարձակ աճը էականորեն նվազացնելու համար: Համաշխարհային բնակչության աճի 80%-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին: Ներկայումսդեմոգրաֆիականպայթյունի թատերաբեմ են հանդիսանում Արևադարձային Աֆրիկայի , Մերձավոր և Միջին Արևելքի և ավելի փոքր աստիճանով՝ Հյուսիսային Ասիայի երկրները: Գրեթե երկու անգամ նվազել են աճի տեմպերը զարգացած երկրներում: Շատ անցումային շրջանի երկրներում՝ Ռուսաստան, ՈՒկրաինա, Մերձբալթյան երկրներ, Բուլղարիա, Ռումինիա, նկատվում է բնական աճի նվազում մի շարք պատճառներով (ինչպեսբնակչության դեմոգրաֆիական ծերացման միտման, այնպես էլ ձգձգվող սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքում ծնելիության կտրուկ նվազում և մահացության աճ):



Քարտեզ 8. Աշխարհի բնակչության թվի ենթադրվող աճը 2008–2050 թթ. (մլն մարդ)

ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ

Բնակչության աճի պրոցեսների բացատրման նպատակով մշակվել է դեմոգրաֆիականանցմանկոնցեպցիան: Ըստայդ կոնցեպցիայի՝ավանդական հասարակությունում ծնելիությունը և մահացությունը բարձր են, և բնակչության թիվը շատ դանդաղ է աճում: Դեմոգրաֆիական անցումը սկսվում է ինդուստրիալ հասարակության ձևավորման հետ համարյամիաժամանակ:Ավանդականիցվերարտադրության ժամանակակից տիպին անցումը ավարտվեց Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի արդյունաբերական երկրներում XX դարի 50-ական թվականներին:

Առաջին փուլ

Մահացության կրճատումը ընթանում է ավելի արագ , քան ծնելիության կրճատումը, որի արդյունքում կտրուկ աճում է բնակչության բնական աճը : Այս փուլում տեղի է ունենում ժողովրդագրական պայթյուն:

Երկրորդ փուլ

Մահացությունը շարունակում է նվազել, բայց ծնելիությունը ավելի արագ է նվազում , որի հետևանքով բնակչության աճը կամաց-կամաց

դանդաղում է:

Երրորդ փուլ

Բնորոշ է ծնելիության նվազման դանդաղում մահացության որոշակի բարձրացման հետ մեկտեղ, այնպես որ բնական աճը պահպանում բարձր մակարդակի վրա: Այս փուլը ավարտելուն ներկայումս մոտ են արդյունաբերական զարգացած երկրները:

Չորրորդ փուլ

Մահացության և ծնելիության ցուցանիշները գրեթե հավասար են և

ժողովրդագրական կայունացման պրոցեսը ավարտվում է:

Ենթադրվում է, որ ժողովրդագրական անցման գործընթացը շարունակվի գրեթե մինչև 2100 թվականը, երբ տեղի կունենա բնակչության թվաքանակի կայունացում՝ 10,5 մլրդ մարդ մակարդակի վրա:



«ՄԱԼԹՈՒՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

XIX դարի սկզբին անգլիացի տնտեսագետ,քահանա Թոմաս Մալթուսը զարգացրեց մի տեսություն, որը ստացավ Մալթուսի՝ ազգաբնակչության տեսություն անունը: Ըստ այդ տեսության մարդկությունն աճում է շատ ավելի արագ՝ երկրաչափական պրոգրեսիայով, քան ավելանում են գոյության միջոցները թվաբանական պրոգրեսիայով, ուստի երկրագունդը գերբնակեցվում է, մարդկության մի մասն էլ մնում է առանց գոյամիջոցների: Այդ երևույթի դրսևորումներն են սովը, աղքատությունը, հանցագործությունները:Որպես գերբնակեցման վերացման գործոններ՝ Մալթուսը նշում էր պատերազմները, համաճարակները, ծնելիության կրճատումը: Ներկայումս էլ կան գիտնականներ, ովքեր հետևում են Մալթուսի տեսությանը: Նրանցից ոմանք պնդում են, որ ներկայումս մարդկությանն սպառնում է ոչ այնքան ատոմային , որքան՝ «ժողովրդագրական ռումբը»:

Սակայն իրականում այդպիսի անհանգստությունը զուրկ է հիմքերից: Գերբնակեցումը ոչ թե բացարձակ է,այլ՝ հարաբերական, այսինքն՝ սովը ,

աղքատությունն առաջացել են ոչ այնքան բնակչության չափազանց մեծ թվի, որքան՝ տնտեսության թույլ զարգացման հետևանքով: Մալթուսի ժամանակներում երկրագնդի բնակչության թիվն ընդամենը 1 մլրդ էր, իսկ ներկայումս՝ 7 մլրդ,ովքեր, գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ, ապրում են շատ ավելի բարեկեցիկ կյանքով, քան՝ այն ժամանակվա 1 մլրդ մարդը:

Բացի այդ՝ մարդկության աճի պատմական ընթացքը, բնակչության վերարտադրության որոշ կրճատման ներկա միտումներն ու ապագայում սպասվելիք փոփոխությունները վերլուծելով՝ գիտնականներից շատերը կարծում են, թե աշխարհի բնակչության թիվը XXI և XXII դարերի սահմանագլխին կկայունանա:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՏԻՊԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Բնակչության վերարտադրության ցուցանիշները տարբեր երկրներում տարբեր են , և, ըստ այդ ցուցանիշների , առանձնացնում են առաջին և երկրորդ տիպի երկրներ: Համամոլորակային հիմնախնդիր ծնող «ժողովրդագրական պայթյունը» տեղի է ունենում գլխավորապես երկրորդ տիպի վերարտադրություն ունեցող երկրներում: Դրանք Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի զարգացող երկրներն են, որոնց տնտեսական աճը չափազանց դանդաղ է ընթանում: Այդ պատճառով էլ ժողովրդի բարեկեցությանմակարդակը մնում է ցածր, սրվում են սոցիալական հակասությունները, դժվարանում է բնակչությանը պարենով ապահովելը, անգրագիտության հաղթահարումը, աճում է գործազրկումը: Այդ տիպի երկրներին բաժին է ընկնում աշխարհի բնակչության տարեկան աճի 90%-ավելին: Այդ երկրների տնտեսական և սոցիալական զարգացումն արագացնելու, դրա միջոցով սովյալների ու աղքատների թիվը կրճատելու և բնական միջավայրը բարելավելու ջանքերը հաճախ ցանկալի արդյունք չեն տալիս: Բնակչությունը շարունակում է ավելի արագ աճել, քան տնտեսությունն ու պարենամթերքի արտադրությունը: Հիմնախնդրի լուծման գլխավոր միջոցը երկրորդ տիպի վերարտադրություն ունեցող երկրներում ծնելիության կրճատման միջոցով բնական աճի կրճատումն է, այլ կերպ ասած՝ ընտանիքի պլանավորումը: Այս առումով առանձնանում են Չինաստանը և Հնդկաստանը , որտեղ կենտրոնացած է աշխարհի բնակչության ավելի քան 1/3-ը: Հնդկաստանում բնակչության թվի տարեկան աճը ժողովրդագրական քաղաքականության հետևանքով հասել է 1,3%-ի, թեպետ նախկինի համեմատությամբ նվազել է, բայց դեռևս բարձր է աշխարհի բնակչության աճի միջին ցուցանիշից: Բնակչության թվի արագ աճը պայմանավորված է Հնդկաստանի բնակչության բարեկեցության և կրթության ցածր մակարդակով, քաղաքային բնակչության փոքր բաժնով ու բազմազավակության ազգային սովորույթով: Կանխատեսվում է, որ 2050 թվականին երկրի բնակչության թիվը կհասնի 10,6 մլրդ մարդու:

Բնակչության թվով Չինաստանն աշխարհի ամենամեծ երկիրն է: Այս երկրումէապրումաշխարհիբնակչությանգրեթե 1/5-ը, հետևաբար՝բնակչության թիվը և մանավանդ դրա աճի տեմպը բացառիկ մեծ և ուղղակի ազդեցություն ունեն Չինաստանի, ինչպես նաև ամբողջ աշխարհի վրա: Չինացիները XX դարում պահպանել են բազմազավակ ընտանիքի ավանդույթը: 1949 թ. երկրում

հաստատվեց սոցիալիստական կարգ, կառավարության մեծ ջանքերով նվազեց բնակչության մահացությունը: Բարձր ծնելության պահպանման ու մահացության նվազման շնորհիվ Չինաստանի բնակչությունն սկսեց աճել շատ բարձր տեմպերով՝ տարեկան 2,8%-ով: Երկրում տարածված սովը, գործազրկությունը և սոցիալական այլ չարիքներ հաղթահարելու նպատակով երկրի կառավարությունն իրագործեց նաև ծնելիության կրճատմանը նպատակաուղղված աննախադեպ ծավալի <<կոշտ>> ժողովրդագրական քաղաքականություն: Երկրում մեծամասնություն (93%) կազմող հաներին << պարտադրում>> էին ընտանիքում ունենալ մեկ երեխա, իսկ այդհորդորըխախտողներին <<պատժում էին>> մասնավորապես՝ երկրորդ և հաջորդ երեխաների հաշվով ընտանիքին չէին հատկացնումպարենամթերք:Ժողովրդագրականվերոնշյալ քաղաքականության հետևանքով 1970-ական թվականներից մինչև օրս բնակչության բնական աճը կրճատվել է շուրջ 7 անգամ: Ներկայումս բնական աճը կազմում 0,4%, այսինքն՝ զգալիորեն ցածր է աշխարհի բնակչության աճի միջինցուցանիշից(1,1%):ՈՒստիերկրի կառավարությունը 2012 թվականին որոշում կայացրեց տրամաբանորեն հակառակ ուղղությամբ փոխել ժողովրդագրական նախկին քաղաքականությունը՝ խրախուսել ծնելիության չափազանց ցածրացած մակարդակի բարձրացումը:

Որոշ զարգացող երկրներում ընտանիքի պլանավորումը հանգեցրել է զգալի արդյունքի: Որոշ երկրներ էլ <<հույսները>> դրել են քարոզչական միջոցառումներին:Սակայն, ժողովրդագրական հիմնախնդրի լուծման հիմնական ուղին մնում է երկրի տնտեսական ու սոցիալաական առաջադիմությունը՝ առաջին հերթին ինդուստրացումը, որը կհանգեցնի տնտեսական ու սոցիալական ընդհանուր առաջընթացի: Կբարձրանա նաև ուրբանիզացման մակարդակը, հետևաբար բնակչության բնական աճըկկրճատվի:



Գծ. 13. Աշխարհի բնակչության թվի հեռանկարային հնարավոր փոփոխությունները

Առաջին տիպի երկրներում բնակչության բնական աճը շատ փոքր է, կամ ընդհանրապես աճ չկա: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ վերարտադրությունն ընդհանրապես խախտվում է, բնակչության թիվը՝ կրճատվում, և տեղի է ունենում դեպոպուլյացիա: Դրա արդյունքում ավելի շատ երկրներում է տարածվում ժողովրդագրական ճգնաժամը: Ներկայումս ժողովրդագրական ճգնաժամ դիտվում է ոչ միայն արևմտաեվրոպական որոշ զարգացած երկրներում՝Գերմանիա, Շվեդիա, Դանիա և այլն , արևելաեվրոպական գրեթե բոլոր երկրներում (Ռուսաստան, ՈՒկրաինա, Բելառուս, Բուլղարիա, Ռումինիա և այլն):



Ժողովրդագրական ճգնաժամը ՌԴ-ում

Այդ երկրներում բնակչությանթվի կրճատումը լուրջ համապետական հինախնդիր է: Նրանք ջանումենապահովել բնակչության ընդլայնված վերարտադրություն, այսինքն՝ բնակչության բացարձակ թվի աճ: Դրա համար մշակում և իրականացնում են հատուկ ժողովրդագրական քաղաքականություն: Ծնելիությանխթանման նպատակով արտոնություններ են նախատեսում բազմազավակ ընտանիքների համար, երեխաներին լրացուցիչ նպաստներ են տալիս և այլն: Ընտանիքի պլանավորման ծրագրեր են իրականացնում Ֆրանսիան, Գերմանիան և մի շարք այլ զարգացած երկրներ :

Միայն երկրների տնտեսական և սոցիալ-մշակութային առաջադիմության պայմաններում է հնարավոր լուծել ժողովրդագրական հիմնախնդիրը:Ժողովրդագրական հիմնախնդիրը վերաբերվում է աշխարհի բոլոր երկրներին, քանի որ բնակչության արագ աճի հետևանքով մի շարքայլ հիմնախնդիրներ՝ պարենային, ռեսուրսային, բնապահպանական և այլն, դրսևորվում են ոչ միայն առանձին երկրներում, այլև ամբողջ երկրագնդում: Այդ պատճառով էլ ժողովրդագրական հիմնախնդիրն ունի համամոլորակային բնույթ և ՄԱԿ-ուշադրությանկենտրոնումէ: Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի և դրա լուծման ուղիների վերաբերյալ հիմնահարցերըքննարկվել են 1984 թ. Մեխիկոյում, 1994 թ.՝ Կահիրեում, ավելի ուշ՝ՄԱԿ-ի կողմից հրավիրված ազգաբնակչության հարցերով այլ համաշխարհային խորհրդաժողովներում:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ-ում XX դարի վերջին տեղի ունեցան հասարակական –քաղաքական, սոցիալ – տնտեսական արմատական փոփոխություններ:

1988թ. ավերիչ երկրաշարժի ծանր հետևանքները, ղարաբաղյան հակամարտության հարուցած բազմաթիվ դժվարությունները և երկրի տնտեսական զարգացումը խոչընդոտող տևական շրջափակումը ծանր կացության մեջ գցեցին պետությանն ու հասարակությանը: Սոցիալական նոր իրողությունների հետևանքը եղավ այն , որ սկսեցարագորեն անկում ապրել ծնելիությունը, բարձրացավ մահացության մակարդակը, մանավանդ՝ նորածինների ու մանկահասակ երեխաների շրջանում, նվազեց կյանքի սպասվող միջին տևողությունը, խաթարվեց ամուսնաընտանեական արժեքների համակարգը, խարխլվեցին հայկական ավանդական ընտանիքի հիմքերը, ավելացան ամուսնալուծությունները, իսկ ամուսնությունները պակասեցին, նվազեց բնակչության աճի ցուցանիշը, փոխվեցին բնակչության սեռատարիքային համամասնությունները, բնակչությունն սկսեցարագորեն ծերանալ:

Փոխվեց ՀՀ ժողովրդագրական իրավիճակը , ինչը մեր պետության ևազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է: Հրատապ խնդիրէառաջացել՝ որդեգրել ժողովրդագրական նոր քաղաքականություն, որը կստեղծի առկա իրավիճակը շտկելու և ժողովրդագրականզարգացմանկայունուհետևողական միտումներապահովելու ծանրակշիռ նախադրյալներ:

Ժողովրդագրական քաղաքականությունը պետական մարմինների

և սոցիալական այլ ինստիտուտների նպատակամղված գործունեությունն է՝ ուղղված բնակչության վերարտադրությանը, բնակչությանթվաքանակի ու կառուցվածքի, դրանց փոփոխման ընթացքը, ծնելիության, մահացության, ընտանեական կազմի, միգրացիայի առկա միտումների սահմանելով բարեփոխումների նպատակները,սկզբունքները և գերակա ուղղությունները:

Ռազմավարական տեսանկյունից առաջնային է համարվում ընտանիքի ընդլայնված վերարտադրության ապահովումը:

Մարտավարական տեսանկյունից առաջիկա տարիների համար գերակա է դիտվում պարզ վերարտադրության ապահովումը՝ ընդլայնված հիմքերի նախապատրաստմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտության արդյունքները դրանք կարող ենք ներկայացնել հետևյալ եզրակացությունների տեսքով.

1.Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը դա երկրագնդի բնակչության աճի այնպիսի կարգավորումն է, որ այն համապատասխանի երկրագնդի տնտեսական ու սոցիալական զարգացման պահանջներին:

2.Ժողովրդագրական իրադրությունը սոցիալտնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների խմբերում ունի յուրահատկություններ:Մասնավորապես՝ անհանգստացնող է ժողովրդագրական ճգնաժամը,որն ավելի ու ավելի է տարածվում: Մյուս կողմից՝ ժողովրդագրական հիմնախնդիրը հակադիր ու ավելի սուր բնույթ է կրում զարգացող երկրներում: Այստեղ դեռ պահպանվում է բնակչության բարձր բնական աճը:

3.Որպես ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդրի լուծման հիմնական ուղիներից ընդունված է համարել ծնելիության կրճատումը կամ այլ կերպ ասած, ընտանիքի պլանավորումը:Այս միջոցառումը ներառում է ինչպես տնտեսական, այնպես էլ՝ հոգևոր լծակների կիրառումը:

4.Ժողովրդագրական հիմնախնդրի լուծման հիմնական ուղին մնում է երկրի տնտեսական ու սոցիալական առաջադիմությունը՝ առաջին հերթին ինդուստրացումը, որը կհանգեցնի տնտեսական ու սոցիալական ընդհանուր առաջընթացի: Կբարձանա նաև ուրբանիզացման մակարդակը, հետևաբար՝ բնակչության բնական աճը կկրճատվի:

5.Ժողովրդագրական հիմնախնդիրը վերաբերում է աշխարհի բոլոր երկրների բնակչությանը, քանի որ <<ժողովրդագրական պայթյունի>>հետևանքով փոխադարձաբար կապված մի շարք այլ հիմնախնդիրներ ընդգծվում են ոչ միայն առանձին երկրներում,այլ նաև՝ ամբողջ երկրագնդում: Բնակչության թվի մեծ աճի հետևանքով սրվում է նրան պարեմթերքով ապահովելու հիմնախնդիրը, վատանում՝ էկոլոգիական իրադրությունը,այսինքն՝սրվում է գոյապահպանման հիմնախնդիրը, որի հետևանքները դրսևորվում են բոլոր երկրներում: Այս պատճառով էլ ժողովրդագրական հիմնախնդիրը համամոլորակային բնույթի է

ուգտնվում է Միավորված Ազգերի Կազմակերպության ուշադրության կիզակետում:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12: Դասագիրք/ Մաքսիմ Մանասյան, Արմեն Հովսեփյան, Ակսել Պոտոսյան/

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ>> ԵՐԵՎԱՆ 2009թ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ Գ. Ե. Ավագյան, Խ. Ե. Նազարյան և ուրիշներ/

https://tamlime.wordpress.com/

blognews.am

https://hy.wikipedia.org/

eco.armlink.net